

ղեցւոյն արեւմտեան կողմը, իրարմէ փոքր անջատուժով երկու մարմարեայ սիւներու տակ կը գտնուէր երեք Հովուաց գերեզմանը, որուն մօտերը կային մոզայիքի մնացորդներ. հարաւային և հիւսիսային պատերը ունէին պատուհաններ վերնայարկի և կեղեցիէն լոյս տանելու համար, և որք այժմ փակուած են քարերով, կողակին երկու կողմերը կը նշմարուին հետքեր սրմանը-կարներու, որ 35 տարի յառաջ, հրդեհի մը հետեանքով ոչընչացած են: Այս եկեղեցիին վրայ, ի հնումն, կառուցուած էր ուրիշ եկեղեցի մ'ալ, որուն աւերակները տակաւին կ'երևին. կը թուի թէ ան աւելի պայծառ էր և ունէր շքեղ կառուցուածք մը, տակաւին կ'տեսնուին սեղանը իր վէմքարով, կամարներուն չորս վիմաշարքը, կողակին աջակողմեան հնօրեայ պատը. կիսով փլած, մոզայիքի բեկորներ և եկեղեցւոյն սեամը. աւանդաբար կը պատմուի թէ Հովուանոցի այս եկեղեցին ունէր կանանց յատուկ վանք մը. այս վերնայարկ եկեղեցւոյն տեղւոյն վրայ հոս հոն ցրուած կան խոյակներ՝ ծաղկաձև քանդակներով, մարմարէ սիւնաբուններ, որ հաւանաբար Խաչակրաց քանդակագործութեան արտադրութիւններն են: Տէյր էր-Ռուաթի այս վանքը, ինչպէս վերև ակնարկեցինք, բուն Հովուանոցի եկեղեցին էր, և այժմ կը գտնուի Յունաց ձեռքը. կ'թուի թէ ան, որքան որ Պարսից յարձակման կործանուած էր, բայց ստորնայարկը կանգուն մնացած էր և վերնայարկը վերաշինուած էր Խաչակրաց օրով, ինչպէս կ'ապացուցանեն տաշուած սիւներու մնացորդները: Համաձայն մեր քննութեան, ճշգրիտ կը նկատենք մեր Կաղանկայտուացիին վերև մէջ բերուած յիշատակութիւնը և Լիէվէնի բացատրութիւնները, որ ճշգրտօրէն կ'ապացուցանեն թէ Պէյթիմ-Սահուրի Հովուաց դաշտի եկեղեցին՝ պատմական մեր «Հովուանոցն» է:

Այցելեցինք նաև Սիւրբ Էլ-Կանէմի դաշտը, Տէյր էր-Ռուաթէն քիչ մը հեռի. Փրանչիսկեանք հոն արտ մը գնելով՝ այգիի վերածած են գոյն և պարսպած. 1859ին ալ պեղումներ կատարուած են և դտած են շատ մը այրեր՝ որ հաւանաբար գերեզմաններ էին. չգտանք հոն ո՛չ վանքի և ո՛չ եկեղեցւոյ հետքեր. և ըստ մեր համոզման, Սիւրբ Էլ-Կանէմի արտի տեղագրութիւնը և պրպտումները չեն հաստատեր Մէսթէրմանի դիտողութիւնները. հետևաբար Տէյր էր-Ռուաթ՝ դարաւոր աւանդութեամբ և պատ-